**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/32 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **06.04.2021թ.**

26.03.2021-06.04.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի կարիքների համար ապրանքների ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-21/32 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Մելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետ, |
| Ս. Բադալյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի գլխավոր ինժեներ, |
| Ռ. Կոգանյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի ավագ ապրանքագետ-պահեստապետ, |
| Գ. Գասպարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի ինժեներ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Մելյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Հանձնաժողովի անդամ Վ. Երանոսյանը («Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «էլեկտրագնացքների շահագործման և նորոգման» մասնաճյուղի պետի տեղակալ վերանորոգման գծով) բացակայում էր:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:

4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և իրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի մարտի 26-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 11:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Առանցքակալ ШС-40 | 700000 |
| 2 | Հպակային շուրթեր КЭ-46/47 | |
| 3 | Հպակային շուրթեր /ЛК/ | 480000 |
| 4 | Ռելեի կոճ 5ТД-522.230.6-75В/НР/ | 200000 |
| 5 | Խցուկ կլինգրիտ 1000*1750*0.8մմ | |
| 6 | Ռելե РЭП 26-002П-У2-1 | 100000 |
| 7 | Ռելե РЭП 26- 220 П-У2-1 | |
| 8 | Էլ. մալուխ ППСРМ-1500 1*120մմ$^2$ | 1000000 |
| 9 | Կտրող սկավառակ 125 x 22 x 2.5 մմ | 15000 |
| 10 | Տեքստալիտ (էբոնիտ, ֆիբր) | |
| 11 | Կտրիչ կտրող | |
| 12 | Կտրիչ անցումային | |
| 13 | Կտրիչ ներտաշող | |
| 14 | ՁՈՒՄ-ի սարքավորում /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար /3SD 855.090 | 1264320 |
| 15 | Անվասայլակի շրջանակ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / /սանձիկային/ 2. 7170. 31. 20. 011. 42 | 46800000 |

| | | |
|---|---|---|
| 16 | Անվասայլակի շրջանակ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / /սանձիկային/ 2. 7170. 31. 20. 011. 43 | 46800000 |
| 17 | Անվազույգ | |
| 18 | Էլեկտրամեկուսիչ էմալ ЭП-9111 | |
| 19 | Մետաղական ուղղանկյուն խողովակ 120x100x5մմ | |
| 20 | Մետաղական ուղղանկյուն խողովակ 20x40x2մմ | 150000 |
| 21 | Նախաներկ | 35000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02230486, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 1-66, Հեռ.՝ +374 10 224 460, էլ. հասցե՝ office@sphinx |
| 2 | «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 01020365, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նանսենի փ., 19-118, Հեռ.՝ +374 55 750 057, էլ. հասցե՝ info@ecenergy.am |
| 3 | «Սենտրալ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00154817, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Եղվարդի 108, Հեռ.՝ +374 96 669 605, էլ. հասցե՝ central.llc@yandex.com |
| 4 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 23241409, գործունեության հասցե՝ ՀՀ, Էրեբունի, Դավիթ Բեկի 2 թղմ. տ. 34/1, Հեռ.՝ +374 91 411 811, էլ. հասցե՝ artur.gnumner@gmail.com |
| 5 | «Ալեռտո» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02686862, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նաիրի Զարյան 74Բ, Հեռ.՝ +374 98 282 938, էլ. հասցե՝ info@alerto.am |
| 6 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 00179816, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Լուսավորիչ 7/1, Հեռ.՝ +374 44 140 121, էլ. հասցե՝ reforcegroupllc@gmail.com |
| 7 | «Սերյան Բալասյան Արթուրի» Ա/Ձ | ՀՎՀՀ՝ 20161762, գործունեության հասցե՝ ՀՀ, Երզնկյան Փ./Տ/27 Արաբկիր 0033, Հեռ.՝ +374 95 333 757, էլ. հասցե՝ balasyan.seryan@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման

համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

1. «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ - հայտով ներկայացված չէ սույն գնման ընթացակարգի հրավերով պահանջված Հավելված 1.1-ը:

2. «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ - հայտով ներկայացված Հավելված 1.1-ով ապրանքների ամբողջական նկարագրերը ներկայացված չեն:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Չափաբաժնի Անվանում | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գինը | Մասնակիցների առաջարկած գները արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Առանցքակալ ШС-40 | «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ | 700 000.00 | 365 000.00 | 73 000.00 | 438 000.00 |
| | | «Սենտրալ» ՍՊԸ | 700 000.00 | 394 445.00 | 78 889.00 | 473 334.00 |
| | | «Սերյան Բալասյան Արթուրի» Ա/Ձ | 700 000.00 | 700 000.00 | - | 700 000.00 |
| 2 | Հպակային շուրթեր КЭ-46/47 | - | - | - | - | - |
| 3 | Հպակային շուրթեր /ЛК/ | - | 480 000.00 | - | - | - |
| 4 | Ռելեի կոճ 5ТД-522.230.6-75В/НР/ | - | 200 000.00 | - | - | - |
| 5 | Խցուկ կլինգրիտ 1000*1750*0.8մմ | - | - | - | - | - |
| 6 | Ռելե РЭП 26-002П-У2-1 | - | 100 000.00 | - | - | - |
| 7 | Ռելե РЭП 26- 220 П-У2-1 | - | - | - | - | - |
| 8 | Էլ. մալուխ ППСРМ-1500 1*120մմ² | - | 1 000 000.00 | - | - | - |
| 9 | Կտրող սկավառակ 125 x 22 x 2.5 մմ | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 15 000.00 | 50 000.00 | - | 50 000.00 |
| 10 | Տեքստալիտ (էբոնիտ, ֆիբր) | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | - | 450 000.00 | - | 450 000.00 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 11 | Կտրիչ կտրող | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | - | 600 000.00 | - | 600 000.00 |
| 12 | Կտրիչ անցումային | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | - | 600 000.00 | - | 600 000.00 |
| 13 | Կտրիչ ներտաշող | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | - | 800 000.00 | - | 800 000.00 |
| 14 | ՁՈՒՄ-ի սարքավորում /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար /3SD 855.090 | - | 1 264 320.00 | - | - | - |
| 15 | Անվասայլակի շրջանակ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / /սանձիկային/ 2. 7170. 31. 20 . 011. 42 | «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | 46 800 000.00 | 82 500 000.00 | 16 500 000.00 | 99 000 000.00 |
| | | «Ալեռտո» ՍՊԸ | 46 800 000.00 | 62 500 000.00 | 12 500 000.00 | 75 000 000.00 |
| | | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 46 800 000.00 | 70 000 000.00 | 14 000 000.00 | 84 000 000.00 |
| 16 | Անվասայլակի շրջանակ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / /սանձիկային/ 2. 7170. 31. 20 . 011. 43 | «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | 46 800 000.00 | 82 500 000.00 | 16 500 000.00 | 99 000 000.00 |
| | | «Ալեռտո» ՍՊԸ | 46 800 000.00 | 62 500 000.00 | 12 500 000.00 | 75 000 000.00 |
| | | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 46 800 000.00 | 70 000 000.00 | 14 000 000.00 | 84 000 000.00 |
| 17 | Անվազույգ | «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | - | 208 500 000.00 | 41 700 000.00 | 250 200 000.00 |
| 18 | Էլեկտրամեկուսիչ էմալ ЭП-9111 | - | - | - | - | - |
| 19 | Մետաղական ուղղանկյուն խողովակ 120x100x5մմ | - | - | - | - | - |
| 20 | Մետաղական ուղղանկյուն խողովակ 20x40x2մմ | - | 150 000.00 | - | - | - |
| 21 | Նախաներկ | - | 35 000.00 | - | - | - |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. 2-8-րդ, 14-րդ, 18-21-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պահանջները:

3. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ-ին և «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել Հավելված 1.1-ում

արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ-ի և «ՍԵՆՏՐԱԼ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերության շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ | բավարար |
| 15, 16, 17 | «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Սենտրալ» ՍՊԸ | բավարար |
| 9-13 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | բավարար |
| 15, 16 | «Ալեռտո» ՍՊԸ | բավարար |
| 15, 16 | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Սերյան Բալասյան Արթուրի» Ա/Ձ | բավարար |

4. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 05.04.2021թ. ժամը 14:30-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 13-րդ հարկում:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. «Սենտրալ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2021թ.-ին նախքան բանակցությունների մեկնարկը սույն Ընթացակարգի հրավերում նշված էլ. հասցեին ներկայացվել են էլ. թվային ստորագրությամբ հաստատված նոր նվազեցված գնային առաջարկներ:

2. 05.04.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էին «Ալեռտո» ՍՊԸ-ի, «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները:

3. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից ներկայացված նոր գնային առաջարկներն են.

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Մասնակցի կողմից ներկայացված նոր նվազեցված գնային առաջարկ | |
|---|---|---|---|---|
| N | Անվանում | | Գինը առանց ԱԱՀ | Գինը ներառյալ ԱԱՀ |
| 1 | Առանցքակալ ШС-40 | «Սենտրալ» ՍՊԸ | 300,000.00 | 360,000.00 |
| 9 | Կտրող սկավառակ 125 x 22 x 2.5 մմ | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 45,000.00 | 45,000.00 |
| 10 | Տեքստալիտ (էբոնիտ, ֆիբր) | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 72,000.00 | 72,000.00 |
| 11 | Կտրիչ կտրող | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 94,500.00 | 94,500.00 |
| 12 | Կտրիչ անցումային | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 94,500.00 | 94,500.00 |
| 13 | Կտրիչ ներտաշող | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | 126,000.00 | 126,000.00 |
| 15 | Անվասայլակի շրջանակ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / /սանձիկային/ 2. 7170. 31. 20. 011. 42 | «Ալեոտո» ՍՊԸ | 50,000,000.00 | 60,000,000.00 |
| | | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 49,800,000.00 | 59,760,000.00 |
| 16 | Անվասայլակի շրջանակ /Մետրոպոլիտենի 81-717 /714 մոդելի վագոնների համար / /սանձիկային/ 2. 7170. 31. 20. 011. 43 | «Ալեոտո» ՍՊԸ | 50,000,000.00 | 60,000,000.00 |
| | | «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 49,800,000.00 | 59,760,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. 9-րդ, 15-րդ, 16-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

2. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափա բաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X” | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրա ծ տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «ԳՐԻՄԱՆ» ՍՊԸ | | 365,000.00 |
| | 1 | «Սենտրալ» ՍՊԸ | X | 300,000.00 |
| | 3 | «Սերյան Բալասյան Արթուրի» Ա/Ձ | | 700,000.00 |
| 10 | 1 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | X | 72,000.00 |
| 11 | 1 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | X | 94,500.00 |
| 12 | 1 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | X | 94,500.00 |
| 13 | 1 | «Արթուր Հարությունյան Գագիկի» Ա/Ձ | X | 126,000.00 |
| 17 | 1 | «Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | X | 208,500,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Մեյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ս. Բադալյան

Ռ. Կոզանյան

Գ. Գասպարյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մ. Ղազարյան